ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» --------- 2016թ. **N ------- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 2-ի հ.891-Ա որոշման 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594 հոդվածը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրատվություն ընդունել Էրեբունի վարչական շրջանի Նուբարաշենի խճուղի հ.30/1, հ.30/2 և հ.30/3 հասցեներում գտնվող համապատասխանաբար՝ 0.471հա, 20.738հա և 3.211հա մակերեսներով հողամասերը՝ նոր աղբավայր նախագծելու, կառուցելու և շահագործելու նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող ավագանու նախագծով նախատեսվում է որպես նվիրատվություն ընդունել Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Նուբարաշենի խճուղու հ. հ.30/1, հ.30/2 և հ.30/3 հասցեներում գտնվող համապատասխանաբար՝ 0.471հա, 20.738հա և 3.211հա մակերեսներով հողամասերը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 2-ի հ.891-Ա որոշմամբ նախատեսվել է Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող 24.42հա (20.738հա+0.471հա+3.211հա) հողամասը հետ վերցնել «Հայանտառ» ՊՈԱԿ-ից, ամրացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը, որից հետո նվիրաբերել Երևան համայնքին՝ նոր աղբավայր նախագծելու, կառուցելու և շահագործելու նպատակով:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 2-ի հ.891-Ա որոշման կատարումն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել նախապատրաստելու Երևան քաղաքի ավագանու այս որոշումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ